

ՀՅԱՀ Լուսավորության Փողոքրգական Կոմիտարիատ
•Քաղաքա յել Դրադարանոյին վաշություն

Ծ Ր Ա Գ Ր Ե Ր

ՄԵՇԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ
ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

30 JAN 2018

ՀՅԱՆ ԼՈՒՄԱԳՈՐԾԻԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ


ԿԱՄԻՍԱՐԻԱՏ

Քաղլուս յեվ գրագարանային վարչություն

Ծ Ր Ա Գ Ր Ե Բ

ՄԵՇԱՀԱՍԿՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՐԱԳՐԱ-
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ

ԿԱԶՄԵՅ Մ. ՄԱՅԻԼՅԱՆ



ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՍԽՀ Ժողկոմիսորհի 1935 թ. մայիսի 8-ի վորոշմամբ լիեկ-
կայանները, վորպես մեծահասակների անգրագիտության և կիսա-
դրագիտության վերացման սիստեմ, վերակառուցվեցին և նրանց
փոխարեն 35-36 ուսումնական տարվա սկզբից կազմակերպվեցին
մեծահասակների հանրակրթական տարրական դպրոցներ:

Հիմք ունենալով այդ վորոշումը մեծահասակների հանրակր-
թական տարրական դպրոցների համար, 1935 թ. մշակվեց և
հրատարակվեց համապատասխան ծրագիր այնպիսի ծավալով,
վորպեսզի մեծահասակ անգրագետները գյուղական վայրերում
լերեք (յուրաքանչյուրը վեց ամիս տևողությամբ), իսկ քա-
ղաքներում յերկու (յուրաքանչյուրն ինն ամիս տևողությամբ)
ուսումնական տարվա ընթացքում ստանան մասսայական տար-
րական դպրոցների ծրագրի սահմանում կրթություն,

Համ կ (բ) կ կենտկոմի և ԽՍՀՄ ժողկոմիսորհի կողմից
1936 թ. հունվարի 16-ին մեծահասակ (16—50 տ.) ազգաբնակ-
չության անգրագիտության և կիսագրագիտության վերացման
վերաբերյալ ընդունվեց հատուկ վորոշում:

Համաձայն այդ վորոշման, անգրագիտության վերացման
սիստեմի մեջ տեղի յեւ ունենալու հիմնական փոփոխությունն:

Մեծահասակների հանրակրթական տարրական դպրոցների
փոխարեն կազմակերպվում են անգրագիտության և կիսագրա-
գիտության վերացման դպրոցներ, ուր ավանդվելու լեւ մայրենի
լեզու, թվաբանություն և աշխարհագրությունն:

Մեծահասակ անգրագետներն այդ դպրոցներում յերկու
ուսումնական տարվա ընթացքում (քաղաքներում ամեն մի ու-
սումնական տարին 10-ը, իսկ գյուղական վայրերում 7 ամսվա
տևողությամբ), յուրաքանչյուր ամսվա 12 որ պարագելով
պետք ե դառնան գրագետներ:

Դրամ. լիազոր Վ. 1094
Պատվիր 404
Հրատարակ. 3660
Տերած 3000

Հանձնված ե արտադրության 9 մարտի 1936 թ.

Ստորագրված ե առաջարկության 17 մարտի 1936 թ.

Դեմքատի ապաբան, Ցեղեան, Ա Գուռնէ 4



11-28046 9P

Այդ նույն վորոշմամբ, 1936թ. 14—18 տարեկանները վո-
րոնք 1936 թվին ինչ-ինչ պատճառներով գուրս են մնացել պար-
տադիր ուսուցման ցանցից, պետք ե կազմակերպվեն հասուլ դըպ-
րոցներ, վորոնցում նրանք ստանալու լեն մասսայական, տարա-
կան դպրոցների ծավալով կրթություն:

Հիմք ընդունելով Համ կ (բ) կ կենտրոնի և ԽՍՀՄ-ի
ժողովական խորհի 1936 թ. հունվարի 16-իվ որոշումը, մեծահասակնե-
րի անգրագիտության կիսազրադիտության վերացման դպրոց-
ների համար մշակվել ե ներկա ծրագիրը՝ հայոց լեզվի,
թվարանության և աշխարհագրության վերաբերյալ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

ԱՆԳՐԱԳԻՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՍԱԳՐԱԳԻՑՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Մեծահասակների անգրագիտության վերացման դպրոցների
համար հստատել հետևյալ ուսումնական պլանը՝

1. Մայրենի լեզու 200 ժամ
2. Թվաբանություն 130 ժամ

Ընդամենը՝ 330 ժամ

Անգրագիտության վերացման դպրոցների համար քաղաք-
ներում սահմանել 10-ամսյա ուսումնական տարի՝ սեպտեմբերի
1-ից մինչև հուլիսի 1-ը, յուրաքանչյուր ամսում 12 աշխատան-
քային որ, որական 3-ական ժամ պարագմունք:

Գյուղական վայրերում՝ ուսումնական տարին 7 ամիս
հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի 1-ը, յուրաքանչյուր ամսում
12 աշխատանքային որ, որական 4-ական ժամ պարագմունք:

Կիսազրագիտության վերացման դպրոցների համար հստ-
ատել հետևյալ ուսումնական պլանը՝

1. Մայրենի լեզու 145 ժամ
2. Թվաբանություն 125 ժամ
3. Աշխարհագրություն 60 ժամ

Ընդամենը՝ 330 ժամ

Կիսազրագիտության վերացման դպրոցների համար սահ-
մանել քաղաքներում 20-ամսյա ուսումնական տարի՝ սեպտեմբերի
1-ից մինչև հուլիսի 1-ը, յուրաքանչյուր ամսում 12 աշխատան-
քային որ, որական 3-ական ժամ պարագմունք:

Գյուղական վայրերում՝ ուսումնական տարին 7 ամիս,
հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի 1-ը, ամեն ամիսը 12 աշխա-
տանքային որ, որական 4-ական ժամ պարագմունք:

Մեծահասակ անգրագետներն անգրագիտության վերացման
դպրոցներում մեկ ուսումնական տարվա ընթացքում (քաղա-
քում 10, իսկ գյուղում 7 ամսվա տևողությամբ) վերացնում
են իրենց անզրագիտությունը և դառնում կիսազրագետներ:

Կիսազրագետները, դարձյալ մեկ ուսումնական տարվա
ընթացքում (քաղաքում 10, իսկ գյուղում 7 ամսում) կիսազրա-
գիտության վերացման դպրոցներում վերացնում են իրենց
կիսազրագիտությունը և դառնում են գրագետներ:

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒ

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Մեծահասակների անգրագիտության և կիսազրագիտու-
թյան վերացման դպրոցի հայոց լեզվի ծրագիրը կազմված է
հետեւյալ յերեք հատվածներից.

1. Ընթերցանություն.
2. Բանավոր և գրավոր խոսքի գարգացում.
3. Քերականական և ուղղագրական նախնական գիտելիք-
ներ:

Սակայն նյութի այսպիսի գասավորումը չի նշանակում,
թե հենց այդ կարգով ել պետք ե անցնել: Ծրագիրը կառուց-
ված է առանձին հատվածներով, վորպեսզի ուսուցչի համար
ավելի պարզ ե վորոշ լինեն այն գիտելիքներն ու ուսակու-
թյունները, վորոնք սովորողները պետք ե յուրացնեն: Բոլոր
հատվածների պարագմունքները պետք ե գնան զուգահեռարար
և միմյանց հետ կապակցված ձևով: Մասնավորապես խոսքի
գարգացումը վորպես աշխատանքի հիմնական մաս, ամբողջ տա-
րին պետք ե տեղ գտնի լեզվական բոլոր տեսակի աշխատանք-
ներում:

Նույնը պետք ե առել նաև ընթերցանության վերաբերյալ
խոսքի գարգացման ձևերից շատերը կապված են ընթերցանու-
թյան հետ: Քերականության աշխատանքի մեծ մասը նույնպես
տեքստերը կարգալու հիման վրա յե կատարվում: Լեզվի գասա-
վանդության հատկացրած ժամերը զանազան բաժինների միջն
բաշխելիս նկատի պետք ե ունենալ, վոր անգրագիտության
վերացման դպրոցներում ժամանակի մեծ մասը հատկացված է
կարգալուն և գրելուն, իսկ կիսազրագիտության վերացման

գպրոցներում, ժամանակը համեմատական չափով բաշխվում և կարգալու, քերականության և խոսքի զարդացման աշխատանքների միջև:

Առանձին ուշադրություն պիտի դարձնել թե՛ գեղագրության և թե՛ ուղղագրության վրա: Ուղղագրության ուսուցումը պետք է տանել հաջորդական կերպով, ըստ հնարավորության կապելով քերականության հետ:

Քերականության դասընթացն սկսվում է անգրագիտության վերացման դպրոցում: Այստեղ պետք է սովորեցնել պարզ նախադասություն ճանաչելու ու կառուցելը: Սովորողները սովորում են յենթակա և ստորոգյալ տերմինները և վոր նախադասության մյուս անդամները ընդհանուր առմամբ կոչվում են լրացումներ: Այդ դպրոցում պետք է անցնել գոյական առունեների հոլովումը, բայց ժամանակների պարզ ըմբռնումը, անձնական դերանունների ճանաչումը և գաղափար կազմել ածականների մասին: Կիսագրագիտության վերացման դպրոցում պետք է ամանդել հիմնական հոլովումները: Այս դասարանում աշակերտները տերմինավորված գաղափար են ստանում նաև թվականների, գերանունների, մակրայների, կապերի, շաղկապների և ձայնարկությունների մասին:

Անգրագիտության վերացման դպրոցներում պետք է անցնել նաև պարզ նախադասություններ: Նախադասության սահմանումը պետք է տալ տարեկիրջում, իսկ կիսագրագիտության վերացման դպրոցում պետք է գաղափար տալ բարդ նախադասության մասին, սովորեցնել մի քանի յենթականներով և մի քանի ստորոգյալներով նախադասություններ կառուցել:

Անգրագիտության և կիսագրագիտության վերացման դպրոցներում սովորողները ծանոթանում են կետադրության բոլոր նշաններին, վերջակետի և առողանության նշանների գործածության բոլոր գեպերին, իսկ ստորակետի, միջակետի, չափերականության մյուս նշանների՝ պարզագույն գեպերին:

Բանավոր խոսքի զարդացման աշխատանքներում առանձին ուշադրություն պետք է դարձնել բարբառային լեզուն գրականով փոխարինելու, և խոսելիս՝ պարզ ու բարդ նախադասությունները կառուցելու խնդրի վրա:

Բառակազմության սովորական ձևերը սովորեցնելուց հետո, կիսագրագիտության վերացման դպրոցներում սովորողներին պարզ ու հասկանալի կերպով պետք է սովորեցնել նաև բառա-

կազմության նոր ձևեր՝ նորագույն հապավումները, կապելով ուն մեր ժամանակակից լեզվաշինարարության դյուրիմբոների խնդիրների հետ:

ԳՐԱԴԱՆՈՉՈՒԹՅԱՆ ՈՒԽՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Անգրագիտության վերացման դպրոցներում զրածանաչաւթյունը պետք է անցնել համակցական մեթոդով: Այս մեթոդը համակցական է կոչվում նրա համար, վորովհետև ամբողջական բառերի, վանկային և հնչյունային մեթոդների լավագույն կողմերի և խորհրդային դպրոցի համար միանգամայն ընդունելի տարրերի համակցություն և ներկայացնում:

Այս մեթոդն ամբողջական բառերի մեթոդին նման է նրանով, վոր այս մեթոդով պարապելիս գրածանաչության դառնեիշտակ սկսվում և վերջացվում է ամբողջական բառերով, իսկ տարրերի սկսվում է նրանով, վոր ամբողջական բառերը մեքենայութեն անդիր չեն անում:

Իսկ ամբողջական վանկերի մեթոդին նման է նրանով, վոր այրբենարանում պահպանվում է հեշտ վանկերից ավելի դժվար վանկերին անցնելու հաջորդականությունը: Սակայն այստեղ ել համակցական մեթոդը տարրերի սկսվում է վանկայինից: Այս մեթոդով պարապելիս յերբեք չենք դիմում առանձին վանկերն անդիր անելուն:

Համակցական մեթոդը հնչյունային մեթոդի նման ձգտում է կարգալու պրոցեսը հենց առաջին դասից միանգամայն համականալի դարձնել մեծահասակ անգրագետներին և մեծ ուշադրություն է դարձնում բառի հնչյունային կազմի վրա: Սակայն հնչյունային մեթոդից համակցական մեթոդը տարրերի սկսվում է նրանով, վոր ա) չի ընդունում մաքուր հնչյուններ և նրանց ձուլումը, բ) բացասում է կարգալու և գրելու վարժությունից միանգամայն անջատ կատարված հնչյունների վարժությունները, գ) աշխատանքը միշտ կատարում և միայն իմաստալի նյութի վրա:

Այսպիսով գրածանաչության համակցական մեթոդն ամբողջական բառերի և վանկերի, վերլուծական — համագրական, խառն կարգալ-գրելու մեթոդ եւ հնչյունատառային մշակման հիման վրա:

Գրաճանաչության համակցական մեթոդը վերլուծական-համագրական մեթոդ ե, վորովհետև հենց առաջին դասից ամ-բողջական բառը հնչյունային վերլուծության ե յենթարկվում և այդ հնչյուններից նույն բառը համադրվում ե, կազմվում. որի-նակ՝ վար, վար, վար:

Այս մեթոդը գրաճանաչության խառն մեթոդ ե, վորովհե-տև առաջին դասից տպագիր և ձեռագիր շրիփաը միասին են տրվում:

Վերջապես այդ մեթոդը կարգալ-գրելու մեթոդ ե, վորովհե-տև դարձյալ հենց առաջին դասից կարգալու և գրելու աշխա-տանքները տարվում են միասին՝ դուգընթացարար, այսինքն՝ վոր ամբողջական բառն ինչպես կարդում, այնպես ել արտագրում են:

Կարգալու ուսուցման առաջին շրջանում (10-15 դաս), սովո-րողները նախքան այբբենարանի տեքստը կարգալը, նրա միջի նոր տրվող բառերը նախապես կազմում են հատվող այրուցենի տառերով. թղթի նեղ շերտի վրա հատվող այրութենի տառերով կազմված բառերը նախապես վերլուծելը և աղա-նույն շարժա-կան տառերով վերլուծած բառը համագրելը մեծահասակ անգրա-գետներին սովորեցնում ե տարբերել առանձին հնչյունները բառի մեջ և արտահայտել յուրաքանչյուր հնչյունը նրա հա-մապատասխան տառով: Այդպիսով կատարվում ե վոչ միայն հնչյունային, այլև նրան համապատասխանող տեսողական վերլուծություն: Վոչ մի զեպքում կարգալու համար չի կարելի տալ այնպիսի բառ, վորի հնչյունային կազմը սովորողին ան-ձանոթ ե կամ անհասկանալի, վորովհետև այդ զեպքում նա այդ բառը մեքենայաբար անդիր կանի: Յերբ սովորողները վարժվում են շարժական տառերով կազմված բառերը կարգալուն, դրանից հետո միայն դասատուն շատ դանդաղ կարդում և այբբենարանի համապատասխան տեքստը: Առաջին շրջանում կարգալիս՝ պետք ե բառերն արտասանել ամբողջական վանկերով, բայց յերկարաց-նելով, վորպեսզի աշակերտները մի անգամ ևս կարողանան լսել հնչյունները բառերի մեջ և կազել նրանց համապատաս-խան տպագիր և ձեռագիր տառերի հետ: Դրանից հետո, սովո-րողները բարձրածայն կարդում են նախ անհատորեն և ապա հաճախ նաև խմբովին: Նախ պիտի կարգալ տալ ուժեղներին և ապա՝ թույլերին, մյուսները հետեւում են իրենց այբբենարանով:

Իսկ ինչպես սովորեցնել գրել ալբրենարանի առաջին շր-ջանում:

Զեռագրի ուսուցման առաջին շրջանում նախ պետք ե սովորողներին ընտելացնել գրելու տեխնիկային՝ կանոնավոր նոստել գրելը կանոնավոր բռնել և այլն: Ուսուցչի անմիջական հոկողությամբ մեծահասակ անգրագետները պիտի սովորեն ար-տագրել զիտակցորեն՝ կանոնավոր, մաքուր, պարզ և վոչ շատ խոշոր տառերով այնպիսի բառեր և կարծ նախադասություններ, վորոնք նախապես կազմված լինեն հատվող այբուբենի տառե-րով: Սկզբում ձեռագիր տեքստն արտադրում են գրատախտա-կից, ապա աստիճանաբար անցնում են այբբենարանի ձեռա-գիր տեքստից արտագրելուն: Պատք ե հետեւ, վոր սովորողներն արտագրեն առանց տառ բաց թողնելու, կարողանան գրել տառ-առ, իսկ յերկար բառերը՝ վանկ-վանկ, ապա ամբողջ բառեր և վերջում փոքրիկ նախադասություններն ամբողջությամբ:

Կարգալու ուսուցման յերկրորդ շրջանում (30-40 դաս) խնդիր ե դրվում կարգալ սովորեցնել վոչ բարդ տեքստ՝ կազմը-ված ծանոթ տառերից՝ առանց նախապես հատվող այբուբենի տառերից այդ տեքստը կազմելու: Այս շրջանում վերջացնում են գրաճանաչությունը, ավարտում են այբբենարանի մասը և այսպիսով հիմնականում ախրապետում կանոնավոր ընթերցա-նության տեխնիկային: Յերկրորդ շրջանում կարգալու հիմնա-կան ձեզ դասարանական բարձրածայն ընթերցանությունն ե, այսինքն յերբ սովորողները հերթով կարդում են հոգվածիք ա-ռանձին հատվածները: Անպայման պետք ե ապահովել յուրա-քանչյուր դասը բոլորի կողմից կարգալը, յեթե վոչ միևնույն ժամկետ, գոնե հաջորդ ժամին:

Զեռագրի ուսուցման յերկրորդ շրջանում պետք ե նախա-պատրաստել սովորողներին, վոր նրանք կարողանան ինքնու-րուցն գրել:

Դրա համար տվյալ շրջանում հիմնականում պետք ե հիշողու-թյամբ գրել սովորեցնել, ինչպես և գրել ուսուցչի արտասանած ուղղագրական տեսակետից հետ բառեր և համառոտ նախադա-սություններ խուսափելով այնպիսի բառերից, վորոնց դրությունը չի համապատասխանում արտասանությանը: Հիշողությամբ գրելը կատարվում ե այսպես, զրատախտակի վրա գրված կարծ նա-խադասությունն արտագրել են տալիս չնշելով նախ՝ մեկ, ապա յերկու և հետո յերեք բառ:

Այս յերկրորդ շրջանում սովորողների մեջ պիտի զարգաց-

նել ուղղագրական ունակությունները, վորպիս մեծատառի վոր-
ծածության պարզագույն դեպքեր (վերնագիրը, նախադասությունը,
հատուկ անունն սկսվում ե մեծատառերով), վերջակետի վոր-
ծածությունը վորպիս նախադասության վերջին նշանի, յեն-
թամնայի գործածությունը տողագարձի ժամանակ:

Մ Ր Ա Գ Ի Բ

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

1. ԸՆԹԵՐՑԱՆՈՒՆԹՅՈՒՆ-ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐՔՈՎ ՅԵՎ ԼՐԱԳՐՈՎ.

(70 Ժամ)

Կարողանալ առանց տառեր բաց թողնելու և կրկնություն-
ների կարգալ հատվող այրուքնի տառերով կազմված բառեր,
ուղարկ ու մատչելի բառերից կազմած համառոտ նախադասու-
թյուններ, ուսուցչի կողմից գրատախտակին գրած բառեր ու
կրճատ գրություններ, դասագրքի մատչելի հոդվածներ և վո-
տանավորներ:

Հետեւել, վոր կարդացածն ու արտասանածը լինեն կանոնա-
վոր, կետադրության և առողանության նշանների համաձայն:

Աստիճանաբար վարժեցնել կանոնավոր, արտահայտիչ և
բարձրածալն կարդալուն, իսկ ընթերցարանի բաժնում սկսել
հաեկնաքնուրույն կերպով լուս գիտակցական կարդալու փորձերը:

Սովորեցնել հոդվածը մասերի բաժանել և վերնագրել:

Կարողանալ անհասկանալի բառերը կամ նախադասություն-
ներն առանձնացնել:

Ծանոթանալ գրքի անվանը, հեղինակին, հրատարակու-
թյանը, տիրագիրն, մի խոսքով՝ գրքի արտաքինին: Ցանկի սո-
վությամբ գտնել հարկավոր հոդվածը:

Ծանոթանալ շրջանակին թերթերին՝ անուն, թիվ, հե-
ռագան, խմբագրություն, թղթակցություն, առաջնորդող, թերթի
դիմավոր բաժինները:

2. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ (10 Ժամ)

Ծանոթացնել, վոր խոսքը կազմված և նախադասու-
թյունից:

Սովորեցնել պարզ նախադասություն կառուցնել:
Կարողանալ նախադասությունը բառերի բաժանել, բառերը
վանկերի և վանկերը՝ հնչյունների:

Կարողանալ նախադասության մեջ գտնել մաքով իրար
հետ կապ ունեցող բառեր:

Հարցերի ոգնությամբ (նրանց տերմինների) վորոշել նա-
խադասության անդամները:

Գիտենալ վերջակետի գործածությունը: Կարողանալ ուսուցչի
առած պարզ նախադասությունները գրել՝ սկսելով և նախադա-
սության վերջում վերջակետ դնելով:

Սովորել մեծատառի գործողության պարզագույն դեպքերը:
Վիտենալ, վոր վերնագիրը, գրության սկիզբը, մարդկանց ա-
նունը, քաղաքների, գյուղերի, գետերի, լեռների, փողոցների,
գրքերի անունները գրվում են մեծատառով:

Գիտենալ շեշտի, հարցականի և բացականչական նշանների
գործածությունը:

Բառերը լսողությամբ տողադարձ անել: Գիտենալ տողա-
դարձի պարզագույն դեպքերը, վոր տողադարձ անելիս տողա-
դարձի նշան և դրվում, միավանկ բառերը չի կարելի տողադարձ
անել և այլն:

Գրության և արտասանության անհամապատասխանու-
թյունը, հնչյուն և տառ, գիտենալ, վոր բառի մեջ «ե» սղագրու-
թյան նշանը բաղաձայնից հետո յերկնչյուն ել (արել), ձայ-
նավորից հետո յել (նայել) վանկի նշան և «ե» սղագրության
նշանը մեծատառ և չունի, գրվում ե լրիվ յել (Յեվ-րոպա): տա-
ռերով:

Գիտենալ, վոր ոժանդակ բայց գրվում ե առանձին:
Յեղակի և հոգնակի, գիտենալ, վոր նով վերջացող բազմա-
վանկ բառերը հոգնակիում գրվում են յերկու նով (սեղաններ):

3. ԲԱՆԱԿՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԴԱՑՈՒՄ (20 Ժամ)

Գրաճանաչությունն անցնելուց առաջ 2-3 ժամ հատկաց-
նել տառերի ելեմենտների վարժություններին և ընտելացնել
գրելու տեխնիկային (գրելիս կանոնավոր նստել, գրիչը և մա-
տիտը կանոնավոր բռնել և այլն):

Ուսուցչի անմիջական հսկողությամբ սովորել կանոնավոր,
մաքուր, պարզ և վոչ շատ խոշոր տառերով գրել:

Կարողանալ գրատախտակից գիտակցորեն ու ձիշտ արտագրել, առանց տառ բաց թողնելու, բառ-բառ, իսկ էքրկար բառը վաճառվանկ, բայց վոչ տառ տառ, աղա ամբողջ բառերով ու ավելի ուշ՝ ամբողջ նախադասություններով (սկզբնական շրջանում տալ այնպիսի նախադասություններ, վորոնք նախապես կազմվում են հատվող այրութենի տառերով):

Աստիճանաբար անցնել այրենաբանի ձեռագիր տեքստից արտադրելուն:

Նախապես վարժ կարդալ սովորելուց հետո կարողանալ այրենաբանի տպագրից արտագրել ամբողջ բառերով, հետագայում և ամբողջ նախադասություններով:

Սովորել հիշողությամբ բառեր և պարզ նախադասություններ գրել, ինչպես և գրել ուսուցչի արտասանած՝ ուղղադրական տեսակետից ձիշտ բառերը, խուսափելով այնպիսիներից, վորոնց գրությունը չի համապատասխանում արտասանությանը:

Պարզել սովորողների ունեցած բառապաշտը և ստուգել նրանց ըմբռնումը: Հարստացնել սովորողների բառապաշտը շատ գործածական հասարակական-քաղաքական, միջազգային և տեխնիկական բառերով: Պայքարել դասակարգայնորեն խորթ բառերի գործածության դեմ:

Հետևել գրական լեզվի մաքրությանը և աշխատել աստիճանաբար վերացնել բարբառային ձեռքը:

Սովորեցնել կանոնավոր և ազատ պատմել իրենց գիտողությունների, ապրումների, կատարած հասարակական և արտադրական աշխատանքների մասին, ժողովում կամ ուսդիուով լսածի, կինոյում, գործարանում և այլուր տեսածի մասին:

Կարողանալ հոդվածին վերաբերվող հարցերին կարճ պատասխաներ տալ:

Վարժեցնել ինքնուրուցն կերպով պատմելու փոքրիկ, պարզ հոդվածների բովանդակությունը՝ սկզբում հարցերի միջոցով, աղա առանց հարցերի:

Կարդացածի հիմնական միտքն ամփոփել:

Կարողանալ լուզնագույն կազմել:

Կարողանալ պատմել կարդացած գրքույների համառոտ բովանդակությունը և իր տպավորությունը և իր տպավորությունները:

Կարդացածի շուրջը մշակված հարցերի պատասխաններն ինքնուրյուն կերպով գրի առնել կարճ նախադասություններով:

Գրատախտակի վրա կանխապես ապահովել գրվելիք բառերի ուղղագրությունը, սովորեցնել ինքնուրուցն կերպով կազմել ան-

վանացուցակ, լցնել 5-6 հարցից բազկացած անկետա, գրել կարճ նամակ, պարզ հասցե, հեռագիր, ստացական, լիազորագիր:

Ուսուցչի անմիջական հսկողությամբ դասարանում մշակել պատի լրագրի համար կոլեկտիվ և անհատական թղթակցություններ:

ՅԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՑԱԿ

Ա. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ (70 ժամ)

Կարողանալ կարդալ գիտակցորեն, ամբողջական բառերով, առանց տառեր բաց թողնելու, կատակցված, արտահայտիչ, և կանոնավոր արտասանությամբ՝ պահպանելով առողականության և կետադրության կանոնները:

Կարողանալ պարզ հոգվածների բովանդակությունն ինքնուրուցն կերպով պատմել՝ սկզբում հարցերի միջոցով, ապա՝ առանց հարցերի:

Կարողանալ կարդացած հոդվածի վերաբերյալ արքած հարցերին պատասխաններ տալ:

Կարողանալ համառոտ ձեռակերպել կարդացած հոդվածի հիմնական միտքը:

Կարողանալ հոդվածը մասերի բաժանել և վերնագրել:

Հանրամատչելի մասսայական գրքույների ընթերցանություն: Կարողանալ պատմել կարդացած գրքերի բովանդակությունը:

Կարողանալ կարդացածից անհամականալի բառերը կամ նախադասություններն առանձնացնել:

Զարգացնել լուռ կարդալու ուսակությունները:

Շարունակել և խորացնել գրքով աշխատանքը, ծանոթանալ գրքի բովանդակությանը ցանկի և առաջարանի միջոցով: Դրաբարաններից ողտվելու ուսակություն:

Ծանոթանալ պարբերականների տեսակներին, մասսայական լրագրերի բաժիններին: Կարողանալ կարճ հաղորդումներ անել կարդացածի մասին:

Բ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (10 ժամ)

1. Նախադասություն.—Խոնչ և նախադասությունը, վերջականի գործածությունը, առողականության նշանների գործածությունը:

2. Բառեր.— Բառերի կապակցությունը նախադասության մեջ, հատուկ անուններ (մեծատառի գործածությունը):

3. Հնչութեանը յիշ տառեր.— Այրութեն (փոքրատառ և մեծատառ, ուղղագրության նշան), վանկ, տողագրած (ը ձայնավորը տողագրածի ժամանակ), գրության և արտասանության անհամապատասխանությունը:

4. Նախադասության անդամները.— Ցենթրակա և ստորովյալ (համառոտ նախադասություն), լրացումները նախադասության մեջ (ընդարձակ նախադասություն):

5. Խոսքի մասերը.— Գոյական՝ գոյականների թիվը, գաղափար հնչունափոխության մասին, գոյականների վորոշող հողը, (ը ձայնավորը բառասկզբում և բառավերջում), գոյականների հորովումը (ձայնակապի ուղղագրությունը): Ածական: Գաղափար անձնական գերանունների մասին: Բայց բայցի գեմքը և թիվը, բայցի ժամանակները (ներկա, անցյալ, ապառնին) բայցի բացառկան ձևը, բայցի անորոշ ձևը, բայցի հրամայական ձևը:

6. Տարրական գաղափար բառերի կազմության մասին:— Պարզ և բարդ բառեր, ածանցափոր բառեր (ամենագործածական նախաձանցների և վերջածանցների ուղղագրությունը):

7. Ուղղագրական վարժություններ.— Ուղղագրական բառարանից ոգտվելու ունակություն:

Գ. ԲԱՆԱԿՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (20 ժամ)

Սովորեցնել կանոնավոր գրական հայերենով իր մտքերը բանավոր ամփոփ հաղորդել: Հարստացնել և ճշգրտել սովորողների բառարանը գիտելիքներից ստացված նոր բառերով: Կարողանալ ազատ պատճել իր արտադրական կրանքում տեսածի և լսածի մասին: Պլանով բանավոր զեկուցելու և մտքերը կանոնավոր արտահայտելու ունակությունների զարգացում: Շարունակել սովորողների բառապաշտի հարստացման աշխատանքները: Նույնանիշ և հականիշ բառեր:

Շարունակել մաքուր, պարզ և կանոնավոր գրելու վարժությունները: Կարողանալ ուսուցչի արտասանած համառոտ և ընդարձակ նախադասությունները գրել և դասագրքից գիտակցողներ և անսխալ արտադրություններ կատարել: Կարողանալ ուսուցչի առաջադրած գրավոր հարցերին պարզ պատասխաններ տալ: Սովորողների կրանքից վերցրած նյութը համառոտ կերպով լեզվական մշակման յենթարկել և դարձնել շարադրության

նյութ: Նախորոք մշակված հոդվածների բովանդակության շուրջ գրել պարզ, ինքնուրույն շարադրություն: Դասարանում ձեռքբերել մշակված հոդվածների ծրագիր կազմելու ունակություն: Պատի լրագրին պարզ թղթակցություններ գրել: Սովորեցնել անկետա, նամակ, հասցե, հայտարարություն, ստացական, լիազորագիր և դիմում գրել: Գրավոր աշխատանքի ժամանակ ուղղագրական բառարանից ոգտվելու ունակություն:

ՄՐԱԳԻՐ

ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՈՒԵՐԻ

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒ

Ա. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ (70 ժամ)

Շարունակել նախորդ դասարանի ձևով «Գրականության քրեստոմատիա»-յի հոդվածները, հանրամատչելի գրքեր, մանավանդ շրջանային թերթեր ավելի արտահայտիչ և սահուն կերպով կարգալու վարժությունները:

Գրքերի և հոդվածների տնային և դասարանական ինքնուրույն և լուս ընթերցում: Հսու պահանջի՝ բնագրից կարեռ հոդվածների և մտքերի ընարություն:

Գրքով և լրագրով կատարվող աշխատանքի խորացում: Վարժեցնել պատի և շրջանային թերթերին թղթակցելու տեխնիկային (գրավորների հետ):

Բ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (30 ժամ)

1. Նախադասության տեսակներ.— Նախադասություններ միքանի յենթականներով, նախադասություններ մի քանի ստորոգայններով, նախադասություններ մի քանի համադաս լրացումներով, նախադասություններ կոչականներով, պարզ և բարդ նախադասություններ: Ուղղակի խոսք:

2. Խոսքի մասեր.— Դոյականի ի, ու և ան հոլովումները: Անձնական, հարցական (միայն մվ, ինչ) և ցուցական դերանուններն ու նրանց հոլովումը: Գաղափար դիմուշ և ստացական հոգերի մասին: Բայցը անցյալ անկատար և վաղակատար ժամանակները: Թվական անուն, քանակական և դասական, սրանց

ուղղագրությունը: Մակրայ: Նախադրություններ և հետազրություններ: Շաղկապ: Զայնարկություն:

3. Բառակազմություն, բարդ բառեր.—Ա. հոդակապ: յերբ ե գրվում և յերբ չի դրվում: Գիտենալ, վոր բարդ բառերի առաջին բաղադրիչ մասն ի—ով վերջանալու դեպքում՝ ի—ն ա հոդակապի հետ դառնում ե ե: Հնչյունափոխություն.— ու և ի ձայնավորների փոխվելն ը—ի (ջուր և ջրաղաց, կիր և կրաքար) կամ բոլորովին զեղչվելը (ամիս և ամսավերջ, անասուն և անասնական), ե ձայնավորի փոխվելն ի ձայնավորի (հանդես—հանգիստական): Ածանցավոր բառեր.— նախածանց՝ ան, ապ, գժ, տ, չ, գեր, արտ և այլն. վերջածանցներ ոտ, ոց, արան, ստան, եղեն և այլն. ածանցները փոխում են բառի իմաստը նրան ուրիշ վորակ առավ (ածուխ բառն առարկա յե ցույց տալիս, իսկ ածխային՝ հատկություն): Գոյականացնող և ածականացնող մի քանի ածանցներ են նրանց ուղղագրությունը: Գաղափար հիմքի և վերջավորության մասին: Նորագույն հապավումներ (գյուղխորհուրդ, ըմբկոմ, շրջորդկոմ, չՍԻՀ, ՄՈՊՐ, չամ կ(Բ)Կ և այլն) նրանց ուղղագրությունը:

4. Բառերի իմաստը.— Համանիշ, նույնանիշ և նույնանուն բառեր: Բառերի առումները:

5. Կետադրության նշաններ.— Վերջակետի, միջակետի, ստորակետի և բութի գործածության ամփոփում և լրացում: Առողանության նշանների գործածության ամփոփում: Կետադրության մյուս նշանների գործածության վերաբերյալ կրկնողական վարժություններ: Նախադասության տեսակներն ու խոսքի մասերն անցնելիս սովորեցնել ստորակետի գործածությունը բարդ, համագասարացներով, կոչական բառերով, ձայնարկություններով նախադասությունների մեջ, բութի գործածություններ համագասարացներով ունեցող նախադասությունների մեջ՝ թվարկության ժամանակ, միջակետի և չակերտի գործածությունն ուղղակի խոսքի մեջ, գիտենալ միացման և անջատման գծերի գործածությունը:

6. Քերականական և ուղղագրական գիտելիքների ամփոփում, լրացում և սիստեմավորում:— Քերականական վերլուծության վարժություններ: Ուղղագրական վարժություններ. ու և ը, զ և ի, ք և կ տառերի ուղղագրությունը:

Գրավոր աշխատանքի ժամանակ ուղղագրական բառգրքույթից կից ոգտվելու վարժություն:

Ուղղագրական տեսրակ պահել և այնտեղ նշանակել այն բառերը, վորոնց գրությունը դժվար է:

Գ. ԲԱՆԱԿՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԴԱՑՈՒՄ (75 Ժ.)

Կարողանալ պատմել կարդացած գրքերի համառոտ բովանդակությունը և իր տպավորությունները:

Ավելի արագ և ազատ, ավելի մաքուր ու պարզ գրելու վարժություն թե մի տողանի և թե յերեմն, անտող թղթի վրա:

Համառոտ շարադրություն գրելու վարժություն՝ սկզբում նախապես մշակված պլանով և ապա՝ առանց պլանի:

Կապակցված կերպով գրել իր համառոտ կենսագրությունը և իր առաջիկա անելիքները:

Ընտրած թեմայով ինքնուրույն պարզ նկարագրություններ գրել:

Հ-ըդ դասարանում սովորած գործնական նշանակություն ունեցող ավելի բարդ գործությունների վարժություններ՝ դիմում, հեռագիր, հալտարարություն, հասցե, անկետա և դրամի փոխառագիր:

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Ինչպես առանձին ամեն մի առարկա, այնպես և թվաբանությունն անցնելիս՝ պետք ե պահպանել ծրագրային նյութերի սիստեմն ու հաջորդականությունը։ Մի նյութից մյուսին կարելի է անցնել միայն այն ժամանակ, յերբ նախորդը գիտակցաբար ու հիմնովին յուրացված է։

Պետք ե գործադրել աշխատանքի այնպիսի մեթոդներ ու յեղանակներ, վորոնք ապահովում են սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը և ոժանդակում նրանց գիտակցաբար յուրացնելու մշակվող նյութը։ Յեզրակացություններ, հետեւթյուններ սովորողներն իրենք պետք ե հանեն ուսուցչի ոժանդակող հարցերի միջոցով թե խնդիրներ և թե որինակներ ուժելիս՝ դա միանդամայն հնարավոր ե, քանի վոր մեծահասակ անդրագետները և կիսագրագետները սովորելու տես դալիս կյանքում արդեն ձեռք բերած վորոշ գիտելիքներով։

Թվաբանության դասավանդումը պետք ելինի կոնկրետ, զննական։ Հիմնական հասկացողությունները յեզրակացվելու յեն կոնկրետ խնդիրներից։ Ամեն անգամ ուսուցիչը պարտավոր ե վորոշ հաջորդականությամբ ու հանդամանորեն, բացատրել անցնելիք յուրաքանչյուր թեմայի հիմնական հարցերը, նշել տիպական խնդիրներն ու վարժությունները և ցույց տալ բանավոր ու գրավոր հաշվելու ձեվերը։

Թվաբանական գործողությունների ունակությունները լավ յուրացվում են նպատակահարմար թվային նյութերի, որինակների միջոցով։ Բայց վերացական թվերով զանազան հաշվեներ կատարել տալով հարկավոր ե նկատի ունենալ, վոր դրանք ինք-

նանպատակ բաներ չեն, այլ միայն միջոց խնդիրների լուծման համար։

Սրանով չի ժամանակում բանավոր հաշվումների անհրաժեշտությունը մեծահասակների համար 100-ի, նույնիսկ 1000-ի սահմանում պետք ե սովորեցնել 4 գործողությամբ արագ հաշվելու պարզ ձեվերը։

Թվաբանության ուսուցմանը հատկացված ժամանակի մի կարևոր մասը պետք ե տալ խնդիրների լուծմանը, ապահովելով սովորողների հմտությունն այդտեղի Շատ ցանկալի յե, վոր ուսուցչի առաջադրանքով նրանք ևս հաճախակի կազմեն խընդիրներ, ոգտագործելով մեր սոցիալիստական շինարարության առողյայից վերցրած հարուստ թվական տվյալները։

Հաշվումները պետք ե կատարել թե գրավոր և թե բանավոր՝ նայած կարիքին։ Անհրաժեշտ ե շատ մեծ տեղ տալ բանավոր հաշվին, վոր պետք ե յուրացնել տալ թվաբանության ամբողջ կուրսը, ամբողջ թվերն ու կոտորակներն անցնելու ընթացքում։ Բանավոր հաշվվը վերաբերվում է վոչ միայն թվային որինակներին, այլ շատ հաճախ խնդիրների լուծման։ Բանավոր հաշվվը լինում է թե սովորական և թե հեշտացնող յեղանակներով։ Անհրաժեշտ սովորողներին վարժեցնել այդ բոլորին։

Նկատի ունենալով, վոր մեծահասակ անդրագետ և կիսագրագետ բանավորներն ու կոլտնտեսականները սոցիալիստական շինարարության առողջապում մշտապես գործ են ունենում հաշվարկումների հետ, վորոնք գլխավորապես հիմնված են տասնորդական կոտորակների սիստեմի վրա, ուստի կիսագրագիտության վերացման դպրոցներում հասարակ կոտորակների միջոցով կոտորակի մասին անհրաժեշտ հասկացողություն տալուց հետո տրվում է տասնորդական կոտորակի ավանդումը վորն անհրաժեշտ ե անցնել հիմնավորապես։

Բացի դպրոցից՝ մշտական, պլանավորված աշխատանքները պետք ե կատարվեն նաև տանը, վորտեղ պետք ե ինքնուրույն մշակվի, յուրացվի գասարանում արծարծված նյութը։

Ուսուցիչը պարտավոր է ստուգել ուղղել սովորողների բոլոր, հատկապես գրավոր աշխատանքները։ Հակառակ դեպքում սիստեմները կտպավորվեն նրանց մեջ, գրա հետևանքով հաշվումներն ել կլինիկ անձիշտ, և ուրեմն կարմատանան սխալ ունակությունները։ Սովորողներն ել պետք ե կատարեն իրենց աշխատանքների ինքնաստուգում։ Բայց վերջնական ստուգումն ամեն անգամ պետք ե կատարի ուսուցիչն ինքը։

Մ Ր Ա Գ Ի Ր

ԹՎԱԲՆԱՌՈՒԹՅԱՆ

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑ—130 Ժ.

1. Առաջին տասնյակի թվերի կարդալն ու գրելը: Հարյուրի սահմանում կլոր տասնյակների կարդալը, գրելը և համրիչի վրա գցելը: Զերոյի նշանակությունը թվերը թվանշաններով գրելիս, խառը թվերի կարդալը և գրելը հարյուրի շրջանում: Յերկնիշ թվերը համրիչի վրա գցելը (20 ժամ):

2. Բանավոր և համրիչով գումարում հարյուրի սահմանում: Նույնը մի տողի վրա գրելով: Գումարման նշանը (+ պլուս): Հավասարության նշանը (=) (4 ժամ):

3. Բանավոր և համրիչով հանում հարյուրի սահմանում: Նույնը մի տողի վրա գրելով: Հանման նշանը (— մինում) (5 ժամ): Հանման ստուգումը գումարման միջոցով: Գումարման ստուգումը հանման միջոցով:

4. Հարյուրի սահմանում բանավոր գումարման և հանման պարզ յեղանակները. Գումարելիների տեղերը փոխելը, գումարելիների կլորացումը, հանելիի կլորացումը մինչև կլոր տասնավորներ (3 ժամ):

5. Յեռանիշ և քառանիշ թվերի կարդալը, գրելը և համրիչի վրա գցելը: Ծանոթացում թվերի կարգերին: Ծանոթացում թվերի միավորների և հազարավորների դասերին (10 ժամ):

6. Թվերի գրավոր գումարումը (քառանիշ թվերի սահմանում): Գումարելիներ, գումար: Ռուբլիներով և կոպեկներով արտահայտած թվերի գումարումը (4 ժամ):

7. Թվերի գրավոր հանումը (քառանիշ թվերի սահմանում): Նվազելի, հանելի, տարբերություն կամ մեացորդ: Զերոները հանման համար տված յերկու թվերի մեջ: Հանման ստուգումը գումարման միջոցով: Գումարման ստուգումը հանման միջոցով: Ռուբլիներով և կոպեկներով արտահայտված թվերի հանում (4 ժ.):

8. Հնգանիշ և վեցանիշ թվեր: Դրանց կարդալը, գրելը և համրիչի վրա գցելը. այդպիսի թվերի գումարումը և հանումը (15 ժամ):

9. Հոռմեական թվանշաններ: Հոռմեական թվանշաններով կարդալը և գրելը 30-ի սահմանում (4 ժամ):

10. Միանիշ թվերի բազմապատկումը: Բազմապատկման նշանը: Բազմապատկելի, բազմապատկիչ, արտադրյալ: Միանիշ թվերի բազմապատկման և բաժանման աղյուսակը: Արտադրյալի անփոխությունը բազմապատկելիի և բազմապատկիչի տեղերը փոխելուց: Բազմանիշի թվերի բազմապատկումը միանիշով: Բազմապատկման այն դեպքերը, յերբ բազմապատկելու վերջում և միջում զերոներ կան: Խնդիրներ (20 ժամ):

11. Յերկանիշ թվերի բաժանումը միանիշի վրա: Բաժանման նշան: Բաժանելի, բաժանարար, քանորդ: Բազմանիշ թվերի բաժանումը միանիշի վրա: Թվերի բաժանականությունը. 10-ի, 2-ի, 5-ի, 100-ի, 25-ի, 9-ի, 3-ի վրա բաժանվող թվերի բաժանականության նշանները: Բաժանման այն դեպքերը, յերբ քանորդի մի քանի կարգերում զերոներ են ստացվում: Բաժանման ստուգումը բազմապատկման միջոցով և ընդհակառակը: Մնացորդով բաժանում: Խնդիրներ (20 ժամ):

12. Ամեն մեծության թվեր. կարգերը և դասերը: Մեծ թվերի կարդալն ու գրելը: Հասկացողություն միլիոնի մասին, միլիոնների դաս: Հասկացողություն միլիարդի մասին. միլիարդների դաս: Մեծ թվերի գումարումը և հանումը (5 ժամ):

13. Միանիշ և բազմանիշ թվերի բազմապատկումը զերոներ ուն եցող նշանակալին թվերով (որ. 20, 400, 700): Բազմանիշ թվերի բազմապատկումը յերկանիշ թվերով: Բազմապատկում յեռանիշ թվով: Բազմապատկման այն դեպքերը, յերբ թե բազմապատկելու և թե բազմապատկիչ վերջում կամ միջում զերոներ կան: Բարդ անվանական թվերի բազմապատկումը (10 ժամ):

14. Մետրական յերկարության չափեր—մետր, դեցիմետր, սանտիմետր, միլիմետր, կիլոմետր: Ուղիղ գծի հատվածի չափումը: Թղթի վրա 7 սմ, 5 սմ. և այլ յերկարության ուղիղ գծեր գծելը: Մետրական ծանրության չափեր—գրամ, կիլոգրամ, ցենտներ, տոնն (5 ժամ):

Հեղուկների չափ—լիտր:

Հողային չափեր—ար, հեկտար:

Անվանական թվերի վերածումը և անդրադարձումը: Բարդ անվանական թվերի գումարումը և հանումը:

16. Կրկնություն և ամփոփում (3 ժամ):

ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑ—125 ժամ.

1. Կրկնություն անդրագիտության վերացման անցածի (3 ժամ):

2. Բաժանում կլոր տասնյակների վրա: Բաժանում ամեն լերկանիշ թվի վրա (լերբ մնացորդ և ստացվում): Բաժանում յեռանիշ թվերի վրա: Բաժանման ստուգումը բազմապատկման միջոցով և ընդհակառակը: Բաժանման գժվար դեպքերը, լերբ քանորդի վերջում, միջում, գերոներ են ստացվում) (15 ժամ):
Բարդ անվանական թվերի բաժանումը:

3. Վարժություններ ամբողջ թվերի չորս գործողության բանալոր ու գրավոր ունակությունների ամրապնդման համար: Թվի մեկ, կամ մի քանի մասը գտնել ինդիքների միջոցով: Վարժություններ փակագծերով և իքսով (3 ժամ):

4. Թվերի բաժանականությունը. 10-ի, 2-ի, 5-ի, 100-ի, 25-ի, 9-ի, 3-ի վրա բաժանվող թվերի բաժանականության նշանները: Թվերը պարզ բազմապատկիշների վերածելը: Ամենափոքր բազմապատիկ թիվ (3 ժամ):

5. Հասարակ կոտորակներ (10 ժամ):

Գաղափար կոտորակի մասին: Կոտորակի կարդալը և գրելը: Կոտորակի համարիչը և հայտարարը, նրանց դերը: Կոտորակների մեծության համեմատումը: Ինչպես մեծացնել կամ փոքրացնել կոտորակը մի քանի անգամ (10 ժամ):

6. Տասնորդական կոտորակներ. գաղափար տասնորդական կոտորակի մասին: Զափումից ստացված թվերի գրելը տասնորդական կոտորակի ձևով: Տասնորդական կոտորակների կարդալն ու գրելը: Տասնորդական կոտորակների մեծության համեմատումը: Տասնորդական կոտորակների մեծացնելն ու փոքրացնելը 10, 100, 1000 անգամ: Տասնորդական կոտորակների գումարումը: Տասնորդական կոտորակների հանումը: Խնդիքներ և փակագծերով վարժություններ (18 ժամ):

7. Տասնորդական կոտորակների բազմապատկումը. տասնորդական կոտորակի բազմապատկումն ամբողջ թվով: Ամբողջի բազմապատկումը կոտորակով: Թվի մասը գտնելը, տասնորդական կոտորակի բազմապատկումը տասնորդական կոտորակով: Արտադրալի կլորացումը: Խնդիքներ (10 ժամ):

8. Տասնորդական կոտորակների բաժանումը: Ամբողջ թվերի բաժանումը, յերբ տասնորդական մասեր են ստացվում: Տասնորդական կոտորակի բաժանումն ամբողջ թվի վրա: Քանորդի փոփոխությունը բաժանելին և բաժանարարը փոփոխելու հետեւանքով: Ամբողջի բաժանումը տասնորդական կոտորակի վրա: Համեմատական բաժանում: Տասնորդական կոտորակի բաժանումը

տասնորդական կոտորակի վրա: Գտնել ամբողջը, յերբ տված եթվի տասնորդական մասը: Հասարակ կոտորակը տասնորդական դարձնելը և ընդհակառակը: Միջին թվաբանական: Խնդիքներ (18 ժամ):

9. Տոկոսներ. — Գաղափար տոկոսի մասին: Ինչպես տասնորդական կոտորակը վերածնել տոկոսի: Տված թվի մի քանի տոկոսը գտնելը: Տված տոկոսներով ամբողջը գտնելը: Տոկոսային հարաբերություններ: Խնդիքներ (20 ժամ):

ՅԵՐԿԱՐԱՋԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1. Գիծ և գծային չափեր. — Ուղիղ գիծ, հատված, գծային չափեր (4 ժամ):

2. Ուղղանկյուն և քառակուսի. — Մակերես, ուղիղ անկյուն, քառակուսի: Ուղղանկյան և քառակուսու մակերեսների չափումը: Քառակուսի մետրական չափեր: Ուղղանկյան մակերեսը: Քառակուսու մակերեսը: Ուղղանկյան և քառակուսու պարագիծը (4 ժամ):

3. Ծավալների չափումը և հաշվումը. — Ուղղանկյուն զուգագուանիստ կամ չորսու: Հորիզոնական և ուղղաձիգ ուղղություններ: Խորանարդ: Ծավալների չափումը: Խորանարդ մետրական չափեր: Ուղղանկյուն զուգահեռանիստի ծավալը: Խորանարդի ծավալը (8 ժամ):

4. Ցեռանկյան և բազմանկյան մակերեսը. — Անկյուններ: Ցեռանկյուն. ցեռանկյան տեսակները. ցեռանկյան մակերեսի չափումը: Բազմանկյուն: Շրջան, շրջանագիծ, տրամագիծ, շառավիղ (4 ժամ):

5. Շրջանաձև դիագրամներ (2 ժամ):

6. Կրկնություն ամբողջ անցածի (3 ժամ):

ԱՅՆԱՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Մեծահասակների հանրակրթական տարրական դպրոցներում աշխարհագրությունն ընդգրկում է հետևյալ թեմաները.

1. Ընդհանուր ֆիզիկական աշխարհագրություն, 2. ԽՍՀՄ-ի աշխարհագրություն և 3. աշխարհի քաղաքական քարտեզը:

Դասավանդության ընթացքում պետք է նկատի ունենալ հետևյալ խնդիրները.

1. Աշխարհագրության բոլոր թեմաներն ըստ հարկի պետք են անցնել նկարների դիտումներով, քարտեզների, գլոբուսի և մոդելների կանոնավոր ոգտագործմամբ:

2. Դասավանդության ընթացքում պետք է ուսուցչի պատմածը հագեցած լինի կոնկրետ և ճշգրիտ որինակներով, փաստերով և զրուցը պետք են տարվի կենդանի ու աշխուժ:

3. Սովորողների հետաքրքրությունը բավարարելու համար պետք են նրանց հանձնարարել ինքնուրուցն կերպով կարդալ աշխարհագրական հանրամատչելի բրոցուրներ, ինչպես որինակ՝ «Աշխարհի մեծ և անեղ յերևույթները», «Դեպի անհայտ հեռուները» և այլն:

4. Անցնելիք նկութը պետք է հարստացնել տեղական աշխարհագրական նյութերով. որինակ՝ յեթե խոսվում է ընդհանրապես լեռների, լճերի, գետերի, դաշտավայրերի, բարձրավանդակների մասին և այլն՝ պետք է տալ նաև իր շրջանի աշխարհագրական այդ կետի անունները, վորոշել նրանց տեղը, նշանակությունը և այլն. յերբ խոսվում է կլիմայի մասին՝ պետք է վորոշել տեղական կլիման պայմանավորող հանդամանքները և այլն:

Մեծահասակների կիսագրագիտության վերացման դպրոցներում սովորողներն այնքան պետք են աշխարհագրություն իմասնան, վոր կարողանան ըմբռնել ֆիզիկական աշխարհագրության

վոչ բարդ խնդիրները, քարտեզներից ոգտվելու հմտություններ ձեռք բերեն, քարտեզների վրա կարողանան փնտրել և գտնել լրագրում կարդացած նշանավոր քաղաքները, գետերը, յերկրները ծովերը և այլն։ Միաժամանակ նրանք պետք են հասկանան այն կարևոր խնդիրը, վոր մարդկային հասարակությունը զիտության ու տեխնիկակայի զարգացմանը զուգընթաց հետզհետե ավելի խորն եւ ուսումնասիրում և ճանաչում բնության ուժեղը, պայքարում նրանցից վնաս տվողների գեմ և մյուսներն ոգտագործում, ծառայեցնում իրեն։ Այս կապակցությամբ նրանք պետք են ըմբռնեն, թե ինչպես խորհրդատիկն իշխանությունը հետզհետե արզիկ սովոր ոգտագործում է յերկրի, մինչև այժմ չոգտագործած հասարակությունները, արտադրողական ուժերի ձիշտ տեղաբաշխում կատարելով և բնության ուժերն ու հարստություններն ի սպաս դնում աշխատավորության կարիքներին ու շահերին, սոցիալիզմի կառուցման մեծ գործին։

Ըստ առանձին թեմաների աշխատանքը պետք են տանել հետևյալ կերպ.

Առաջին թեմա (պլան յեկ քարտեզ).—Այս թեման անցնելիս սովորողները պետք են քարտեզը հասկանալու և կարգալու հըմտություն ձեռք բերեն։ Պլանի վրա դյուրությամբ են լուրացվում մասշտարի գործածությունը և նրա ոգնությամբ տարածությունների չափումը։ Վարժությունները կատարվում են միայն գծալին մասշտարով։ Պլանից քարտեզին անցնելու համար ուղղվում են գաղափար յերկրի ձևի մասին և բերվում յերկրի գնդակներության պարզ ապացուցցներ։ Մասշտարի եյությունը և գործածությունը հասկանալու համար նպատակահարմար են տարբեր մասշտարով գծած քարտեզների վրա չափումներ կատարել։

Առաջինացնացնցը պետք են անցնել նախ գլոբուսի վրա — ցուց տալ նրա միջորեականներն ու զուգահեռականները՝ բացատրելով նրանց նշանակությունը, ուշադրություն դարձնել նրանց ուղղության վրա (հորիզոնի վրա կողմի ուղղությամբ են ձգվում), նրանց մեծության վրա (բոլոր միջորեականներն իրար հավասար են, իսկ զուգահեռականները, բևեռները գնալով փոքրանում են, 60 աստիճանի զուգահեռականը հավասար են մոտավորապես հասարակածի կեսին). գլոբուսի վրա պետք են գաղափար տալ նաև աշխարհագրական լայնության և յերկարության մասին, ապա անցնել քարտեզի աստիճանացնուցին։

Անցնելով կիսագնդերի քարտեզին, պետք ե պարզաբանել, վոր յուրաքանչյուր քարտեղ, վորպես կորընթարթ մակերևույթը հարթության վրա պատկերացնող, չի կարող լինել միանգամայն ճիշտ. կիսագնդերի քարտեզի վրա սկսում ենք անցնել ցամաքի և ջրի բաշխումը, տալով նրանց պայմանական նշանները քարտեզի վրա:

Երագրում թվարկված են աշխարհագրական այն անունները, վորոնք անհրաժեշտ մինիմումն են համարվում սովորողների համար. հարկավոր չե նոր անուն ավելացնել, այլ անհրաժեշտ ե յուրացնել տալ շատերին հարցնելով. որինակ՝ վոր ովկիանոսների միջև ե գտնվում Ամերիկան, Ատլանտիան ովկիանոսը վոր աշխարհամասի միջև ե գտնվում: Հնդկական ովկիանոսի արևմտյան կողմում ինչ աշխարհամաս ե գտնվում, իսկ հյուսիսում, արևելքում և այն և նույն ճեղով անցնել խոշոր ծովերը քարտեզի վրա ցույց տալով:

Դրանից հետո քարտեզի վրա պետք ե ցույց տալ նաև խոշոր պետությունները: Սովորողները լսել են այդ լեռների անունները. այժմ նրանց տեղը քարտեզի վրա վորոշելով, գտնելով թե ԽՍՀՄ-ի նկատմամբ նրանք վոր կողմումն են գտնվում, ինչ յերկրներով, լեռներով, գետերով կամ ծովերով են բաժանված իրարից կամ ԽՍՀՄ-ից կլրացվի վորոշ չափով նրանց գիտելիքներն այդ լեռների մասին: Այս աշխատանքների ընթացքում պետք ե հաճախ հիշատակվեն նաև զուգահեռականներն ու միջորեականները, հասարակածն ու գլխավոր միջորեականը, և վորոշվեն այդ լեռների աշխարհագրական լեռկարությունն ու լայնությունը: Իհարկե, քարտեզը կարդալու հմտությունը մի ժամում չի ձեռք բերվում. նման աշխատանքներ միջա պետք ե կատարել համապատասխան նկութերի անցման ժամանակ:

Վորպես կանոն, հարց ու պատասխանի միջոցով անցած ամեն մի թեման պետք ե ամփոփել, կրկնել և ապա անցնել հաջորդին:

Յերկրորդ թեմայում (յերկրի ձևերը) պետք ե ուսումնասիրել յերկրագնդի կազմությունը, յերկրի մակերևույթի վրա տեղի ունեցած կարևորագույն յերևութները և յերկրի մակերևույթի ձևերը: Դասավանդման ընթացքում անհրաժեշտ ե ոգտագործել աշխարհագրական նկարներ (հրաբուխների, լեռների և այլն): Այս թեմայի նպատակն այն պետք ե լինի, վոր սովորողները խորացնեն քարտեզը կարդալու ուսուկությունները. հատկապես յերկրի մակերևույթի տարբեր ձևերը կարողանան վորոշել քար-

աեղի վրա և սովորեն այդ կապակցությամբ աշխարհագրական անունների անհրաժեշտ մինիմումը, վորը տրված ե ծրագրի այս բաժնում:

Յերրորդ թեմայում (ովկիանոսներ, ծովեր, գետեր և լճեր) անհրաժեշտ ե գաղափար տալ յերկրագնդի ջրային շերտի և նրանշակության մասին:

Այստեղ ևս ծանրության կենտրոնը մնում է քարտեզի վրա ջրային տարածությունների պայմանական նշանները հասկանալուն, անհրաժեշտ սովորողի աչքը վարժեցնել քարտեզի վրա գետը, լիճը, ծովը, ովկիանոսը, ծոցը, նեղուցը տարբերելու և ցույց տալու. դրա համար պետք ե վարժություններ կատարել քարտեզի վրա և յուրացնել տալ ծրագրի այդ բաժնում տված աշխարհագրական անունները. Անցնելով ծովը (ջրի) թեմային, ցույց տալ նեղուցներն ու ծոցերը, դիտելու նաև կղզիներն ու թերակղզիները և գաղափար տալ վերջինների առաջացման մասին, յուրացնել տալ կղզիների և թերակղզիների ծրագրում տված մինիմումը: Հետաքրքիր աշխատանք կարելի յե կատարել այս թեմայի համաշխարհային ջրային մեծ ձանապարհները բաժինն անցնելիս. որինակ՝ վոր ծովերն են միանում Սուեզի ջրանցքով, ինչ աշխարհամասեր ե բաժանում Զիբրալտարի նեղուցը, Պանամայի ջրանցքը. Ջրային ինչ ձանապարհներով կարող ենք Աղովի ծովից դուրս գալ Ատլանտիան ովկիանոս և այլն. Այսպիսով աշխատություն կմտցվի նյութի դասավանդման մեջ և այս կնպաստի քարտեզում կարդացած ու այս թեմայում տված աշխարհագրական անունները յուրացնելուն:

Չորրորդ թեման (յերկրի որեկան և տարեկան շարժումը) նպատակ ունի տալ սովորողներին գիտական պատկերացում յերկրի շարժման մասին: Գետք ե հակազրել արևի յերկույթական շարժմանը գիտական բացարությունը յերկրի շարժման մասին՝ իր առանցքի շուրջը (տարվա յեղանակների առաջանալը): Գետք ե հարց ու պատասխանի միջոցով ստուգել ուսանողների գիտողություններն արևի յերկույթական շարժման մասին՝ տարվա առընկեր յեղանակներին, կեսորին արևի հորիզոնից բարձր լինելու մասին, որվա տեղողության, արևի տաքացնելու կարողության՝ կախված նրա ճառագայթների թեքության աստիճանից և ապա անցնել այդ յերկույթների գիտական բացարությանը:

Այս նյութն անցնելիս պետք ե անպայման փորձեր կատարել գլոբուսի վրա (դասասենյակը մթնացնել և մոմի լույսի

տակ շարժել գլոբուսը — ճիշտ պահպանելով առանցքի թեքությունը): Դասատուն չպետք ե մոռանա, վոր փորձերի ժամանակ առանցքի թեքության ճիշտ պահպանմամբ միայն հնարավորություն կունենա բացատրելու յեղանակների առաջանալը, ինչպես և հուսախային և հարավային կիսագնդերում յեղանակների տարբերությունը:

Սովորողներին դժվար ե ամբողջությամբ պարզաբանել յերկրի և արեգակնային համակարգության առաջանալու խընդիրը, սակայն վորպես հասակավորների՝ կարելի յե ընդհանուր գծերով տալ յերկրի և մոլորակների արեգակնային զանգվածից առաջանալու գաղափարը և այդ ֆոնի վրա պարզել տիեզերքի առաջացման մասին կրոնական բացատրության (աշխարհի ստեղծագործության) անհեթեթությունը և նրա դասակարգային երությունը:

Հինգերորդ թեման (Կլիմա) անցնելով սովորողները պետք ե ճիշտ ըմբռնում ստանան կլիմայական լեռեռութների մասին: Ցույց տալով կլիմայական գոտիները կիսագնդերի քարտեզի վրա և սովորողների անձնական դիտողություններից ոգտվելով՝ պետք ե լուսաբանվի, թե ինչ հանգամանքներից ե կախված տվյալ վայրի կլիման (աշխարհագրական լայնության, վայրի բարձրությունը ծովի մակերևույթից, լեռներով շրջապատված լինելը, ծովից հեռու կամ մոտ գտնվելը, ծովային տաք և ցուրտ հոսանքները և այլն):

Անցնելով մթնոլորտային տեղումներին՝ դասատուն պետք ե գիտական պարզ բացատրություններով ջախջախի այդ հարցում կրոնական պատկերացումները: Մոտերքում ողերեւութաբանական կայան գտնվելու դեպքում՝ կարելի յե եքսկուրսիա գնալ և հասկանալի զրույցով տալ լեզանակի նախատեսման միջոցները, ինչպես և այդ տեսակետից պարզել այդ կայանների մեծ նշանակությունը գուշատնտեսության, ծովային և ողային հաղորդակցության խնդիրներում:

Այս բաժնի աշխարհագրական անունները (ծովալին կլիմա ունեցող և խոնակ շրջաններ, անտառներ) սակավաթիվ են և դժվար չե նրանց յուրացնելը:

Վեցերորդ թեմա (յերկրագնդի սուսահողային գոտիները). պետք ե անպայման աշխատել բուսահողային գոտիների առանձին լանդշաֆտային տեսարանների նկարներով: Հնարավորության դեպքում պետք ե ոգտագործել մոգական լապտեր համա-

պատասխան դիապոզիտիմներով: Սովորողները պետք ե կարողանան այդ զոնաները հողաբուսական և կլիմայական հատուկ քարտեզի վրա ցույց տալ և համառոտ — կոմպլեքսային բնութագիր տալ յուրաքանչյուր գոտուն: Մարդու ներգործությունը բնության վրա պետք ե դասատվի կողմից տրվի զրուցի ձևով և կոնկրետ որինակներով: արհեստական վոռոգում, անտառապատմաներ, ձահիճների չորացում, արհեստական պարարտացում, նոր կուլտուրաների տարածում, խորհրդային լայնածավալ յերկրի բազմակողմանի ուսումնասիրություն և նրա, մինչ այժմ չուսումնասիրված ու չոգտագործած հարստությունների մշակում և այլն:

Նման փաստերի հիման վրա միաժամանակ պետք ե շեշտվի սոցիալիստական հասարակարգի, պրոլետարիատի ստեղծագործական թափի անհամեմատ առավելությունը կապիտալիստականի հետ համեմատած և վերջինիս մարդկային լավագույն կյանքի զարգացման ու առաջադիմության արգելակ հանդիսանալը:

Եռերեսրդ թեման (յերկրակնդի բնակչությունը) անցնելիս պետք ե ցույց տրվեն տարբեր ռասաների պատկանող ժողովուրդների ներկայացուցիչների նկարները, քարտեզի վրա ցույց տալ տարբեր ռասաների պատկանող ժողովուրդների տեղաշարժումը և կոնկրետ որինակներով պարզել բուրժուական ռասայական թերթիայի հակագիտական և հականեղափոխական ֆաշիստական բնուկթը: Արժեքավոր կլինի, յեթե դասատուն հետաքրքիր զրույցներ կազմակերպի յերկրագնդի տարբեր ժողովուրդների կյանքի ու կենցաղի շուրջը (եսկիմոսներ, նենցեներ, տաք գոտու բնակիչներ և այլն):

Ութերորդ թեմա (ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզը). պետք ե սկսել ԽՍՀՄ-ի տեղը կիսագնդերի քարտեզի վրա վորոշելու և ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզին անցնելով: ԽՍՀՄ-ի ֆիզիկո-աշխարհագրական անուններից վորոշ մասը սովորողներն արդեն անցել են կիսագնդերի (աշխարհի) քարտեզն ուսումնասիրելու ժամանակ: Մնում ե այդ նոույնը ջարուհակել ԽՍՀՄ-ի քիզիկական քարտեզի վրա և ավելի լայնացնել սովորողների ֆիզիկո-աշխարհագրական գիտելիքների պաշարը ԽՍՀՄ-ի աշխարհագրության նկատմամբ:

Սովորողները քարտեզի վրա պետք ե հիմովին յուրացնեն ծրագրում տված աշխարհագրական անունները և ամեն մի

առանձին դեպքում կանգ առնեն Անդրկովկասի, Հայաստանի և սովորողների շրջանի ֆիզիկական աշխարհագրության վրա՝ վերջինիս մինիմումը տված և ծրագրում և պետք և այն ամրացնել սովորողների մեջ:

ԽՍՀՄ-ի համառոտ տնտեսական աշխարհագրական տվյալները պետք և նույնպես անցնել քարտեզի վրա: Տնտեսական տվյալներից վերցված են աչքի ընկնողները, վորոնց մեծ մասը սովորողները լսել են, գիտեն կամ կարդացել են թերթերում, այնպես վոր դժվար չի լինի նրանց յուրացումը: Յերկրի տնտեսական հարստության առանձին ոբյեկտներն անցնելիս թուոցիկ կերպով պետք և հիշատակել նաև թե ինչ չափով, ինչպես և ինչի համար են նրանք ոգտագործվում: Այս թեման մշակելիս ձեռքի տակ պետք և ունենալ նաև Անդրկովկասի և Հայաստանի քարտեզները:

Իններորդ քեման (աշխարհի քաղաքական քարտեզը) համարյա ամփոփում և ընդհանուր ֆիզիկական աշխարհագրությունը: Այստեղ միայն տրվում են աչքի ընկնող և մեր հարևան պետություններն ու նրանց մայրաքաղաքները: Այս թեման անցնելիս յուրաքանչյուր պետության մասին պետք և տալ համառոտ տեղեկություն տնտեսության կարևոր ճյուղերի դրության, կառավարության ձեր և մեզ հետ ներկայումս ունեցած հարաբերությունների մասին: Ցույց տալ սահմանները (առանց անունների) և մայրաքաղաքը:

ՄՐԱԳԻՐ

Ա.ՇԽԱ.Բ.Բ.Գ.ՐՈՒԹՅԱՆ

ԿԻՍԱԴՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

1. ՊԼԱՆ ՅԵՎ ՔԱՐՏԵԶ

Դաղափար հորիզոնի մասին: Հորիզոնի կողմերը և նրանց դաշտերը արևի, աստղերի և կողմնացույցի ոգնությամբ:

Պլանը վորակես վոչ մեծ հողամասի արտանկար: Պլանի նշանակությունը յերկրի պաշտպանության և սոցիալիստական շինարարության գործում:

Կոլտնտեսության, գյուղի կամ քաղաքի պլանը: Ինչպես են գծում պլանը, մասշտաբը և նրա նշանակությունը, գծալին և թվային մասշտաբը: Հեռավորության չափումը պլանի վրա՝ մաս-

շտաբով: Կարողանալ գծագրել պարզ պլան և կարդալ գծած պլանը (2 ժամ):

Յերկրի ձեւը: Ի՞նչպես եյին հնում պատկերացնում յերկրը: Յերկրի մակերեսութիւնը կորընթարթության, գնդաձեռւթիւնն մասին ապացուցներ. հորիզոնի լայնանալը վեր բարձրանալիս, դիտողություն ծովափից՝ հեռացող և մոտեցող շոգենավի շարժմանը, յերկրի ստվերը լուսնի վրա նրա խավարման ժամանակ, Յերկրագնդի մեծությունը: Գլոբուսը վորպես յերկրի մողել: Դիտողություններ գլոբուսի վրա՝ բևեռներ, հասարակած: Յերկրի պատկերումը գլոբուսի վրա: Աստիճանացույց: գուգահեռականներ — աշխարհագրական լայնություն: Միջորեականներ — աշխարհագրական յերկարություն: գլխավոր միջորեական և նրա նշանակությունը: Աստիճանների համարակարումը — լայնությունը՝ հասարակածից գեպի բևեռները, յերկարությունը՝ գլխավոր միջորեականից գեպի արևելք և արևմուտք: Ճամաքի և ջրի պատկերումը գլոբուսի վրա: Աշխարհամասեր և ովկիանոսներ: Կիսագնդեր և նրանց քարտեզը (2 ժամ):

Հորիզոնի կողմերը կիսագնդերի և առհասարակ քարտեզի վրա: Ջուրը և ցամաքը պատկերելը կիսագնդերի և առհասարակ քարտեզի վրա: Աշխարհամասեր՝ Յերկրապա, Ասիս, ԱՓրիկա, Ավստրալիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Ամերիկա, Անտարկտիդա: Ովկիանոսները՝ Մեծ, Ատլանտյան, Հնդկական, Գլխավոր ծովերը՝ Հյուսիսային, Բևեռալիքին, Բալթիկ, Հյուսիսային կամ Գերմանական, Միջերկրական, Սև ծով:

Գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա ցույց տալ ԽՍՀՄ-ն, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Չինաստանը, Հնդկաստանը (3 ժամ):

2. ՅԵՐԿՐԻ ԿԵՂԵՎԸ

Ատմոսֆերա, Հիդրոսֆերա, Լիտոսֆերա: Յերկրագնդի ներքին կառուցվածքը՝ կարծր կեղեւ, մագմա և միջուկ: Հրաբուխ և յերկրաշարժ: Յերկրագնդի կեղեւի կազմությունը՝ նստվածքալին և զանգվածալին տեսակներ: Յերկրի մակերեսութիւնը՝ ձեռքը: Բացարձակ և հարաբերական բարձրություն: Դաշտավայրեր, բարձրավանդակներ, լեռներ և լեռնապատճեր. սրանց պատկերումը քարտեզի վրա:

Յերկրի մակերեսվութիւնը՝ հողմնարումն ու վորոշումը:

Հանածո հարստությունները վորպես եներգիալի և հումքի աղբյուրներ։ Հանածո հարստությունների (քարածուխ, նավթ, յերկաթ և այլն) տեղաբաշխումն ըստ աշխարհամասերի և ԽՍՀՄ, կիսագնդերի քարտեզի վրա ուսումնասիրել աշխարհամասերի մակերևույթը։

Եթերոպայում։— Դաշտավայրերից՝ Արևելյան-Յելլոպական, (ռուսական, գերմանական, ֆրանսիական լոմբարդական, Միջին և Ստորին Դանուբյան), լեռներից՝ Ալպեր, Կարպատներ, Սկանդինավյան, Պիրինյան, Ապենինյան, Ռումանիան։ Գագաթներից՝ Մոնթան, հրաբուխներից՝ Վեզուվ (3 ժամ)։

Ասիայում։— Դաշտավայրերից, Արևմտյան-Միբիրական, Արալո-Կասպյան, Զինական, Միջագետք, Քուռի և Ռիոնի։

Լեռներից՝ Տյան-Շան, Հիմալայ, Կովկասյան։ Գագաթներից՝ Եվերեստ, Մասիս, Ելբրուս, Կազբեկ, Արագած։

Հյուսիսային Ամերիկայում։— Դաշտավայրերից՝ Միսիսիպիից՝ Լեռներից՝ Կորդիլերյան։

Հարավային Ամերիկայում։— Դաշտավայրերից՝ Ամազոնից՝ Լեռներից՝ Անդյան (Կորդիլերների շարունակությունը)։

Աֆրիկայում։— Լեռներից՝ Ատլասի (2 ժամ)։

3. ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐ, ԾՐՎԵՐ, ԳԵՏԵՐ ԹԵՎ ԼՃԵՐ

Ովկիանոսներ և ծովեր։ Ովկիանոսների խորությունը։ Ծովային ջրի աղիությունը։ Ծովային հոսանքներ — տաք՝ Գոլֆըշտրոմ. ցուրտ՝ Կամչատկալի։ Մակընթացություն և տեղատվություն։ Ծովային ալիքները և ցամաքի ափերի վողողումը։ Ծովեր, նեղուցներ, թերակղզիներ, կղզիներ։

Ծովերի նշանակությունը (ջրային ճանապարհ, ձկնորսություն և ալլն)։ Համաշխարհային ջրային մեծ ճանապարհները և պայքար նրանց համար։ Նեղուցների և կղզիների նշանակությունը ջրային ճանապարհների վրա։

Ովկիանոսներ։— Մեծ, Ատլանտյան, Հնդկական։

Ծովեր։— Հյուսիսային Բևեռալին, Հյուսիսային կամ Գերմանական, Բալթիկ, Միջերկրական, Կարմիր, Ճապոնական, Բերինյան (2 ժամ)։

Թերակղզիներ։— Ականդինավյան, Պիրինյան, Ապենինյան, Բալկանյան, Կոլա, Ղրիմ, Կամչատկա, Կորեա, Հնդկական, Արաբական, Փոքր Ասիս, Ալյասկա։

Կղզիներ։— Գրելանդիա, Մեծ-Բրիտանիա, Ճապոնական, Սամալին, Զոնդյան, Անտիլան, Ովկիանիա։
Նեղաւցներ։— Զիբրալտար, Գարդանել, Բոսֆոր, Բերինգյան։
Ջրանցքներ։— Սուեզի, Պանամայի (3 ժամ)։
Սոներկրյա ջրեր։— Աղբյուրներ, հանքային աղբյուրներ, (հեյզեր), գետեր։ Գետերի վտակները, աջ և ձախ ափերը, հունը, ավազանը, Գետերի անտեսական նշանակությունը — վոռոգում, սպիտակ ածուխ, ջրային ճանապարհ, Գետային ջրանցքներ։
Գետեր։— Հոենոս, Դանուբ, Դնեպր, Դոն, Վոլգա (Ոկա և Կամա վտակներով), Ոբ (Իրտիշ վտակով), Յենիսեյ, Լենա, Ամուր, Բուռ, Արաքս և վտակներ Միսիսիպի (Միսուրի վտակով), Ամագոն, Նեղուց, Լեռնա (2 ժամ)։

4. ՅԵՐԿՐԻ ՈՐԱԿԱՆ ՅԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՄԺՈՒՄԸ

Արեգակը վորպես ջերմության և եներգիայի աղբյուրը Երկրի համար։ Զերմության փոփոխությունն յերկրի վրա որպակը կը լինի տամբերին և տարվա տարբեր էեղանակներին։ Արեկի և մյուս լրտատունների յերկույթական շարժումը։ Բևեռային աստըդի հարաբերական անշարժությունը։

Երկրի որական շարժումը, Բևեռները վորպես անշարժ կետեր յերկրի որական շարժման ընթացքում։ Երկրի առանցքը։ Գետեր և ցերեկի, Երեկովա և գիշերվա տեղողության փոփոխությունը տարվա ընթացքում։ Զերմության կախվածությունն արեկի ճառագայթների ուղղությունից (ճառագայթները թեք են արեկի ճառագայթների վրա թե ուղղահայց)։ Երկրի տարեկան պընկնում յերկրի վրա թե ուղղահայց։ Երկրի առանցքի թեքությունն իր որբիտի նկատմամբ և տարվա էեղանակները։

Արեգակնային համակարգություն։ Երկրը վորպես մոլորակ։ Համառոտ ծանոթություն յերկրի առաջացման մասին։ Կլոնական հայցքները տիեզերքի և յերկրի ծագման մասին։ Նրանց անհեթեթությունը և դասակարգալին ելությունը։ Պալքար նրանց անհեթեթությունը և դասակարգալին ելությունը։ Կոյցերկրի ձեի և շարժման գիտական տեսակետների համար։ (Կոյցերնիկոս, Զորդանո Բրունո, Գալիլեյ) (3 ժամ)։

Յեղանակ և նրա տարրերը. ջերմություն, քամիներ, տեղումներ: Թաղափար կլիմայի ժաման: Կլիմայի նշանակությունը տնտեսության համար: Պայքար կլիմայական վնասակար լեռնությունների դեմ: Յեղանակային յերեսութեների հետ կապված կրոնական պատկերացումները: Ողերեսութարանական կայանները և նրանց տված ոգուտները:

Արեգակի տարրեր բարձրությունը հորիզոնի նկատմամբ յերկրագնդի զանազան մասերում:

Յերկրագնդի բաժանումը կլիմայական հինգ գոտիների: Արևադարձներ և քեռուային շրջաններ: Արևի ճառագլթների անկման ուղղությունը հարավային և հյուսիսային կիսագնդերի վրա տարվա տարրեր յեղանակներին: Կլիմայական տարրեր գոտիների առանձնահատկությունները.— բարձր ջերմություն և ջերմաստիճանի տատանման բացակայություն տաք (այրեցյալ) գոտում: Ջերմաստիճանի տատանումները տարվա տարրեր յեղանակներին՝ բարեխառն գոտում: ցածր ջերմաստիճան՝ ցուրտ գոտում:

Յամաքի և ջրի անհամաչափ տաքանալը: Քամիներ: Ծովային հոսանքներ: Ծովային և ցամաքային կլիմա: Ծովային հոսանքների ազդեցությունը կլիմայի վրա: Տեղի բարձրության ազդեցությունը կլիմայի վրա: Մթնոլորտային տեղումներ և նրանց բաշխումը յերկրագնդի վրա: Մթնոլորտային տեղումների համաշխարհային քարտեզը. խոնավ շրջաններ (Գլինեյի ծովափ, Սև ծովի, Անդրկովկասայան և Ղրիմի ափերը): Յերկրագնդի անապատները (Սահարա, Գորի կամ Շամո, Արաբական), Անդրկամպյան կիսաանապատային շրջանները (Կարա-Կում, Կիզիլ-Կում) (3ժ),

6. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՈՒԽԱՀԱՅՈՂԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԸ

Հողի բուսական և կենդանական աշխարհի կախումը կլիմայից. սրանց գոտիական տեղաշարժումը յերկրագնդի վրա:

Բևեռային շրջաններ, տունդրաներ, անտառ, տափաստան, անապատներ, մերձարևադարձային շրջաններ, արևադարձային անտառներ և սալաններ: Յուրաքանչյուր գոտու հողաբուսական և կենդանաբանական աշխարհի համառոտ բնութագիրը:

Բնության ոգտագործումն ու փոփոխումը մարդու միջոցով՝ կախված արտադրողական ուժերի բնույթից և աստիճանից, արտադրողական հարաբերությունների սիստեմից (բնության

ուժերի և հարաբերությունների ոգտագործման սահմանափակ հնարավորությունները կապիտալիստական հասարակակարգում և անսահմանափակ հնարավորությունները՝ սոցիալիստական հասարակակարգում):

7. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Բնակված և չբնակված շրջաններ յերկրագնդի վրա: Յերկրագնդի բնակչության քանակը և բաշխումն ըստ աշխարհամասերի: Յերկրագնդի խիտ բնակված շրջանները:

Մարդկության բաժանումն ուսսաների: Նրանց բնակության շրջանները յերկրագնդի վրա:

Բուրժուական ուսսայական և ազգային թեորիաները. Նրանց դասակարգային ելությունը: Գաղութային աշխատավոր ժողովուրդների և գունավոր ցեղերի շահագործումն ու վոչչացումը կապիտալիստների կողմից: (Նեղերն ու կարմը ըստ թներն Ամերիկայում): Ստրկական աշխատանքը գաղութներում: Ազգային հարցի լուծումը ԽՍՀՄ-ում (3 ժամ):

8. ԽՍՀՄ-Ի ՑԻԶԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

1. ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը և տեղադրումը Յերկրայում և Ասիայում: ԽՍՀՄ-ի ծովային և ցամաքային սահմանները, Նրանց նշանակությունը յերկրի պաշտպանության և անտեսական հարաբերությունների տեսակետից՝ ԽՍՀՄ-ի սահմանամերձ պետությունները:

ԽՍՀՄ-ի առանձին մասերը. Յերկրապական մաս, Կովկաս (Հյուսիսային և Անդրկովկաս), Միջին Ասիա, Սիբիր և Հեռավոր Արևելք (2 ժամ):

ԽՍՀՄ-ի սահմանամերձ ծովերը. — Հյուսիսային Բևեռալին, Բարենցի, Սպիտակ, Կարայի, Բերինդյան, Ոխոտի, Ճապոնական, Սև, Բալթիկ: Բալթիկ ծովի Ֆիննական ծոցը:

Նավահանգիստներ. — Լենինգրադ, Մուրմանսկ (չսառչող), Արխանգելսկ, Իգարկա, Վաղիկվաստոկ, Նովորոսիյսկ, Ողեսսա, Բաթում, Հյուսիսային Բևեռալին ծովի ճանապարհները և նրա նշանակությունը ԽՍՀՄ-ի համար: «Սիրիոյակովի», «Զելլուսկինի» և «Լիտկելի» արշավանքը: Պայքար բեվեռալին ճանապարհ յուրացնելու համար:

Թերակղիներ. — Կոլա, Կամչատկա, Ղրիմ: Կղզիներ. — Սախալին, Նոր Յերկիր (2 ժամ):

2. ԽՍՀՄ-ի մակերևույթի կազմությունը՝ պաշտավալբերի գերազանցությունը. լեռների ծալրամասներում գտնվելը:

Դաւավագյրեր. — Արևելյան-Եեվրոպական, Արևմտյան-Եիրի-րական, Արալո-Կասպիական, Քուռի, Ռիոնի:

Բարձրավանդականեր. — Միջին-Ռուսական, Մերձվոլգյան, Դոնեցի, Միջին Սիբիրական, Հայկական:

Լեռներ. — Ուրալան, Ղրիմի, Կովկասյան (Ելբրուս և Կազբեկ), Պամիրի, Տյան-Շան, Ալտայան, Կամչատկայի հրաբուխները. Անդրկովկասի լեռները՝ Աղարա-Ախլցխայի, Սուրամի, Փամբակի, Շահդաղի, Ահմանգանի, Զանգեզուրի: Լեռնագագաթներից Արագած (2 ժամ):

3. ԽՍՀՄ-ի ոգտակար հանածոները: Հանքային հարըստությունների հետազոտված լինելը ցարական Ռուսաստանում: Այս տեսակետից խորհրդային իշխանության նվաճումները:

Քարածխային ավագանեներ. — Դոնեցի, Կուզնեցկի, Կարագանդալի, Մերձմուկովյան, Ուրալի, Տկվիբուլիի և Տկվարչելիի:

Նավի. — Բագու, Գրողնի, Մալիկով, Վրաստան, Եմբա, Ուրալ, Սախալին, Միջին Ասիա:

Յերկար. — Կերչ, Կրիվոյ Ռոգ, Ուրալ, Կուրսկի, մագնիսային անոմալիան, Դաշքեսան-Կիրովաբադի մոտ:

Մարգանեց. — Չիատուրի (Վրաստան):

Պղինձ. — Ուրալ, Կազակստան, Ալլահվերդի և Ղափան (Հայաստանում):

Աղեր. — Խոհանոցային ծովային աղ-Բասկունչակ և Կասպից լճերից:

Քարաղ. — Դոնբաս, Նախիջևան: Ապատիտներ. — Խիբինի (Կիրովսկի) հանքերը: Կալիական աղեր. — Սոլիմակամուկում (Ուրալ):

Աղօկի. — Ուրալում, Միքիրում: ԽՍՀՄ-ի տեղը մյուս պետությունների մեջ կարիքավոր հանածոների պաշարի և արդյունահանման ասպարիդում (5 ժամ):

4. ԽՍՀՄ-ի գետերն ու լճերը. — ԽՍՀՄ-ի գետերի մեծ մասի հարթ վայրերով հոսելու հանգամանքը և դրանից բղխած առանձնահատկությունները — ձմռանը սաղցապատվելը, գարնանը՝ հորդանալը, ամռանը՝ ծանծաղանալը: Գետերի ոգտագործումը նավարկության, ելեկտրիֆիկացիայի, գոռոգման համար: Գետային ջրանցքները:

Գետեր. — Հուռախալին Դվինա, Գեչորա, Ոք, (Իրտիշ վը-

տակով), Ցենիսել (Անգարա վտակով), Լենա, Ամուր, Նեվա, Վրլիսով, Սվիր, Դնեպր, Դոն, Վոլգա (Ոկա և Կամա վտակներով). Ռուրալ Ամուր-Դարիա, Սիբ-Դարիա, Քուռ, (Ալաղան, Արագվա, Թարթար, Խրամ վտակներով, Խրամ վտակի Դեբեդը և Նրա կազմվելը Չորագետից և Փամփակ գետից) Արաքս (Ախուրյան, Քասպի, Զանգուռ կամ Հրազդան):

Լճեր. — Լաղոգա, Ռնեգա, Բասկունչակ, Կասպից, Արալան, Բալխաշ, Բակալ, Սևան:

Ջրանցքներ. — Հոկտեմբերյան (Մարինյան), Սպիտակ-Բալթիկ ծովան (Ընկ. Ստալինի անվան) ջրանցք, Վոլգա-Մոսկվա ջրանցք, Վոլգա-Դոն և Դոն-Դնեպր ջրանցքների նախագծերը: Եքսկուրսիա քարտեզի վրա այդ ջրանցքներով:

Հիդրոկայանեներ. — Վոլխովի, Սվիրի, Դնեպրի, Զագես, Ռիոն-գես, Յերգես, Չորագես, Քանաքեռնեգես և Սևան-Զանգուռ կասկադի նախագիծը: Անգարայի հիդրոկայանների նախագիծը:

Վոռոգում. — Մեծ Վոլգայի պրոբլեմը: Անդրկովկասի և Միջին-Ասիայի ջրանցքները (Մուղանի, Սարդարաբադի և այլն) (5 ժամ):

5. Կլիման և հողաբուսական գոտիները: ԽՍՀՄ-ի տեղադրված լինելը բարեխառն և ցուրտ գոտիներում Հյուսիսային Բեկուամին ծովի, Մեծ, Արլանտյան ովկիանոսների ու Միջերկրական ծովի աղդեցությունը ԽՍՀՄ-ի կլիմայի վրա:

ԽՍՀՄ-ի կլիմայի փոփոխվելը հյուսիսարևմուտքից հարավարևելք. արևելքում ցամաքային կլիմայի ուժեղանաւը և մթնուրտային տեղումների նվազումը: Միջին Ասիայի կիսաանապատները:

ԽՍՀՄ-ի մերձարևադարձակին շրջանները. — Ղրիմի հարավալին ծովափ, արևմտյան Անդրկովկաս (Աջարիա և Աբխազիա), Լենքորանի ծովափ: Սուրամի և Կովկասյան լեռների նշանակությունը Անդրկովկասի կլիմայի համար: Արևելյան Անդրկովկասի տափաստանները (Մուղան) և ցամաքային կլիման: Հայկական լեռնաշխարհի ցամաքային կլիման՝ պայմանավորող Փիգիկուաշխարհագրական պայմանները (2 ժամ):

ԽՍՀՄ-ի բնակչությունը, ԽՍՀՄ-ի բնակչության թիվն ու խտությունը համեմատած մյուս լերկրների հետ: Բնակչության բնական աճը համեմատած մյուս յերկիրների հետ: այդ տարբերությունը պայմանավորող հանգամանքները: Բնակչության խտությունը ԽՍՀՄ-ի տարբեր մասերում Հոկտեմբերից առաջ և հետո, զրա սոցիալ-տնտեսական պատճառները (արտադրողական ուժերի տեղաբաշխման աղդեցությունը):

ԽՍՀՄ-ի բնակչության ազգավիճ կազմը (2 ժամ):

ԽՍՀՄ-ի քաղաքական բաժանումը: Միութենական հանրապետություններ և նրանց գլխավոր քաղաքները.— ՌՍՖԽՀ—Մուկիա, Լենինգրադ, Գորկի, Իվանովո, Ռուգրահնա—Կիև, Խարկով, Ռուսաստան—Մինսկ, Բուրգաստան—Աշտարակ, Ռուգրեկաստան—Տաշքենդ, Տաճիկաստան—Ստալինաբադ, Անդրկովկաս—Թիֆլիս (2 ժամ):

ԱՍՖԽՀ-ի մեջ մտնող հանրապետությունները.— Վրաստան (Աբխազիա, Աջարիա, Հարավային Ռութիա), Աղբքաջան (Նախիջևան և Լեռնային Հարաբաղ), Հայաստան և նրա շրջանները: Անդրկովկասի կազմի մեջ մտնող հանրապետությունների և ինքնավար շրջանների մայրաքաղաքները. բնակչության թիվն ըստ առանձին հանրապետությունների: Անդրկովկասը վորպես ցարական մոռւսաստանի հետամնաց և շահագործվող մի գաղութամաս:

Անդրկովկասի միանգամայն փոխվելը խորհրդայնացումից հետո: Հետամնաց ազգարային յերկրից արդյունաբերական-ագրարային յերկրի վերածվելը:

Արդյունաբերության և գյուղատնտեսության վերելքը 1-ին հնդամլակում և 2-րդ հնդամլակի առաջին տարիներում: Անդրկովկասի հանքերը, արդյունաբերության ճյուղերը:

Անդրկովկասի գլխավոր գործարանները: Անտառնապահական, բամբակամշակման, ազգեգործական շրջանները: Անդրկովկասը վորպես բամբակամշակման 2-րդ բազա (Միջին Ասիալից հետո): Թելի և ցիտրուսային (կիտրոն, նարինջ, մանդարին,) բուլսերի, ծխախոտի մշակումն Անդրկովկասում:

Անդրկովկասի յերկաթուղիները: Եքսկուրսիա քարտեզի վրա ԽՍՀՄ-ի յերկաթուղային գլխավոր ճանապարհներով: Ողափին հաղորդակցությունը ԽՍՀՄ-ում և Անդրկովկասում (4 ժամ):

Աշխարհի քաղաքական քարտեզը: Խմբերի համար յերկրներ, գաղութներ, կիսազարդութներ և կախյալ յերկրներ (ծանոթություն և պասսիվ լուրացում):

Գետություններ. ԱՄՆ. (Նյու-Յորք, Վաշինգտոն), Անգլիա (Լոնդոն), Ֆրանսիա (Փարիզ, Մարսել), Գերմանիա (Բեռլին), Իտալիա (Հռոմ), Ճապոնիա (Տոկիո), Ֆինլանդիա (Հելսինկի), Եստոնիա (Տալլին), Լատվիա (Ռիգա), Լիտվա (Կաունաս), Լեհաստան (Վարշավա), Իռումինիա (Բուլղարիա), Թյուրքիա (Անկարա), Իրան (Թեհրան, Թավրիզ), Աղվանաստան (Քաբուլ), Մոնղոլիա (Ուլան-Բատոր), Չինաստան (Չանկին, Շանհայ) (4 ժամ):



14 АПР. 1936

284

ԳԻՅ 40 ԿՈՊ.

11

28076



ПРОГРАММЫ
Для школ великовозрастных по
ликвидации неграмотности и
малограмотности
Составил М. М а и л я н
ГИЗ ССР Армении, Эривань, 1936